ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

09 դեկտեմբերի 2016 թվականի N 124-Հ

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ և ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդածներով, հիմք ընդունելով՝ <Վի Էյջ Սթոուն> ՍՊ ընկերության 2016 թվականի հունիսի 27-ի թիվ 7 դիմումը, աշխատանքային փոփոխված նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների դրական եզրակացությունները և <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի 2016 թվականի օգոստոսի 4-ի թիվ Ֆ-228/16 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <Վի Էյջ Սթոուն> ՍՊ ընկերության՝ ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի բազալտի հանքավայրից արդյունահանում կատարելու համար, թիվ ՇԱԹՎ-29/209 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 3 տարով, սահմանելով մինչև՝ 2028 թվականի օգոստոսի 10-ը:

2) ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի բազալտի 10.08.2000թ-ին տրամադրված 240.0 հազար մ^3 պաշարով հանքավայրի *(150.0 հազար մ^3 պաշար առաջին տեղամասում, 90.0 հազար մ^3 երկրորդ տեղամասում)*, 01.01.2016թ դրությամբ 110.9 հազար մ^3 մնացորդային պաշար ունեցող առաջին տեղամասն ընդլայնել՝ 1.X=4383166 Y=8585399, 2.X=4383185 Y=8585457, 3.X=4383143 Y=8585482, 4.X=4383110 Y=8585407 <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող տեղամասով, ընդհանուրը տրամադրելով՝ 1.X=4383166 Y=8585399, 2.X=4383349 Y=8585373, 3.X=4383356 Y=8585528, 4.X=4383341 Y=8585535, 5.X=4383333 Y =8585537, 6.X=4383328 Y=8585536, 7.X=4383322 Y=8585533, 8.X=4383270 Y=8585493, 9.X=4383259 Y=8585478, 10,X=4383247 Y=8585465, 11,X=4383240 Y=8585460, 12,X=4383231 Y=8585457 ,13,X=4383219 Y=8585455, 14.X=4383207 Y=8585455, 15.X=4383185 Y=8585457, 16.X=4383143 Y=8585482 17.X=4383110 Y=8585407 <ARM WGS-84> կոորդինատային համակարգով բնութագրվող տեղամասը, տրամադրելով առաջին տեղամասում 69.1 հազար մ^3 պաշար, ընդհանուրը առաջին տեղամասում ՝ օգտակար հանածոյի՝ 180,0 հազար մ^3 բազալտի պաշար (առաջին և երկրորդ տեղամասերում միասին՝ 270,0 հազար մ^3 պաշար) .

4) հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ առաջին տեղամաս-15.0 հազար մ^3 բազալտի պաշար, երկրորդ տեղամաս-7.5 հազար մ^3 բազալտի պաշար:

2. Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-209 պայմանագրում, լեռնահատկացման ԼՎ-209 ակտում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:
2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը.
3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.
4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
3. <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել *ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:*

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ